

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի
2014թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության
հիմնական արդյունքների մասին

1. **ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի 2014թ. գործունեության կարևոր արդյունքներից** կարելի է առանձնացնել հետևյալը.
- ա) Լույս է տեսել կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուի 16 և 17-րդ հատորները /համապատասխանաբար 208 և 228 էջ/ և պատրաստվել է հրատարակման «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ» մատենաշարի 2-րդ պրակը՝ 13 տպագր. մամուլ ծավալով:
 - բ) Օգոստոսին Կենտրոնը կազմակերպել է «Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» խորագրով երիտասարդ գիտնականի մեկշաբաթյա ամառային հանրապետական դպրոց՝ 30 ունկնդիրներով:
 - գ) Կենտրոնը Գյումրիում կազմակերպել է «Հացի տոն» երկրորդ ազգագրական փառատոնը՝ հանրապետության բոլոր մարզերի և ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ:
 - դ) Գիտականորեն հիմնավորվել է այն վարկածը, որ Հայկական լեռնաշխարհը նշանակալից դեր է խաղացել անվավոր փոխադրամիջոցների, հատկապես մարտակառքերի ստեղծման ու տարածման մեջ, բացահայտվել է իսթական բեռնասայլերի անվան հնդեվրոպական-հայկական ծագումը:
 - ե) Կենտրոնի հնագետների կողմից Շիրակի մարզում հայտնաբերվել են նոր հնավայրեր. ուշ բրոնզից վաղ երկաթին անցման ժամանակաշրջանի դամբարանադաշտ Մայիսյան գյուղի վարչական տարածքում, անտիկ դամբարանադաշտ Հայկաձորի մ.թ.ա. 9-6-րդ դդ. ամրոց-բնակավայրի տարածքում, ժայռափոր դամբարաններ և կատակոմբներ Ազատան գյուղի վարչական տարածքում գտնվող մ.թ.ա. 13-8-րդ դդ. ամրոցում:

2. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները 2014թ.

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը 2014թ. շարունակել է իրականացնել «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» ծրագիրը՝ (ղեկ.՝ Բ.Գ.Պ.Ս.Հայրապետյան):

2014թ. հունիսին իրականացված պլանային պեղումներով ի մի է բերվել Կենտրոնի հնագետների կողմից հայտնաբերված Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան հնագիտական հուշարձանի՝ տաճարական համալիրի արդեն մեկ տասնամյակ շարունակվող հնագիտական ուսումնասիրությունը, որով իրական հնարավորություն է ստեղծվել ամբողջացնելու տաճարական համալիրի, սրբարանի և հարակից բնակելի կառույցների հատակագծային պատկերը, կառույցների տարբերություններն ըստ բնույթի, պարզելու հնավայրի պլանավորման և կառուցապատման սկզբունքները, վերջնականորեն ճշգրտելու գտածո նյութերի թվագրությունը, ինչպես նաև՝ տիպաբանական աղերսներն այլ հնավայրերի հետ: Շարունակվել են պլանային պեղումները նաև Ազատանի մ.թ.ա. 9-8-րդ դարերի ամրոց-բնակավայրում ու դամբարանադաշտերում/օգոստոս/ և Հայկաձորի վաղերկաթիդարյան ամրոց-բնակավայրում /հոկտեմբեր/: Առաջին կիսամյակում իրականացվել են նախորդ տարվա պեղումներով վերոնշյալ հնավայրերից հայտնաբերված նյութերի կամերալ ուսումնասիրություն և վերականգնողական աշխատանք:

Աշխատանքի արդյունքները. 3 հոդվածների տպագրություն /մեկը՝ ՌԴ-ում/, գիտական զեկույցներով մասնակցություն 3 միջազգային և 1 հանրապետական գիտաժողովներում /Երևան, Կազան, Սանկտ-Պետերբուրգ, Մոսկվա/: Հաշվետու տարում խմբի կողմից հայտնաբերվել է նաև 2 նոր հնավայր Շիրակի մարզի Մայիսյան և Ազատան գյուղերի վարչական տարածքում:

- «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություն-2» ծրագրի շրջանակներում 2014-ին շարունակվել է հայոց պատմության համատեքստում պատմական գավառի հնագույն, հին և նոր շրջանների պատմության մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Մասնավորապես ճշգրտվել են մի շարք անվավոր փոխադրամիջոցների հնագույն անվանումների հնդեվրոպական-հայկական ակունքները, Աքեմենյան աշխարհակալության կործանումից հետո Հայաստանի անկախության վերականգնման գործում Օրանտես/Երվանդի դերի հարցերը, ավարտվել է որպես առանձին ազգագավառ՝ պատմական Շիրակի Էրիախի երկրի ուսումնասիրությունը, մեկնաբանվել են պատմական Տայքի հուշարձանների ազգային պատկանելության և վարչաժողովրդագրության մի շարք արդի խնդիրներ, երկու այցելություններով կատարվել են Տայքի մի քանի պատմական հուշարձանների չափագրումներ, ավարտվել է 1917-1918թթ. Ընթացքում Ալեքսանդրապոլի գավառի ժողովրդագրական դրությանը վերաբերող նյութերի մշակումը, 1914-ից գավառի տարածքում տեղաբաշխված արևմտահայ գաղթականության դրության, 1918-1921թթ. թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլի իշխանության տեղական մարմինների գործունեության, Ալեքսանդրապոլի կրթական և մշակութային հաստատությունների ուսումնասիրությունը: Կենտրոնի պատմաբանների խումբը հաշվետու տարում տպագրել է 18 (մեկը՝ արտերկրում) գիտական հոդվածներ,

միջազգային գիտաժողովներին մասնակցել 4 զեկուցումներով, կազմակերպել «Առաջին աշխարհամարտը և Շիրակը» թեմայով գիտական ընթերցումներ:

- Շարունակվել է Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի պատմագագազրական ծավալուն ուսումնասիրության երկրորդ մասը՝ նվիրված քաղաքի Լենինականյան ժամանակահատվածի ազգագրական պատկերի ամբողջացմանը: Ուսումնասիրվել են ավանդական տոնակատարությունների ժամանակակից դրսևորումները, Գյումրիում կազմակերպվել է «Հացի տոն» երկրորդ ազգագրական փառատոնը, ավատական փուլին է հասցվել «Շիրակի ժողովրդական երաժշտական ստեղծագործությունը 20-րդ դարի երկրորդ կեսին» երգերի ժողովածուի կազմումը, շարունակվում են Ալեքսանդրապոլ-Լենինականի քաղաքային պարերի հավաքման ու համակարգման աշխատանքը, Շիրակի գեղարվեստի պատմության ուսումնասիրությունը, փաստական հարուստ նյութի վերլուծության հիման վրա քննության են ենթարկվել խորհրդային շրջանում Լենինական քաղաքի արդյունաբերականացմանը, քաղաքային արհեստներին ու տնտեսական զբաղմունքներին վերաբերող հարցեր և այլն:

Կենտրոնի ազգագրագետների խումբը հաշվետու տարում կազմակերպել է չորս գիտարշավներ մարզի տարածքում, վերծանել և համակարգչային մշակման ենթարկել Շիրակի երաժշտական բանահյուսության շուրջ 20 նմուշ, հրատարակել է 12 գիտական հոդված /մեկը՝ Բուլղարիայում/, 3 զեկուցումով հանդես եկել միջազգային, 4 զեկուցումով՝ հանրապետական գիտաժողովներում: Կենտրոնը 2014թ. օգոստոսին գումարեց «Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» խորագրով երիտասարդ գիտնականի մեկշաբաթյա ամառային հանրապետական դպրոց՝ Շիրակի և այլ մարզերի 30 ունկնդիրներով /ասպիրանտներ, մագիստրոսներ, ուսուցիչներ, հայցորդներ, գիտթեկնածուներ/, տպագրվեց դպրոցի նյութերի ժողովածուն՝ 7 տպ. մամուլ ծավալով:

5. 2014թ. հրապարակումների ցանկը

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Գիտական աշխատություններ, ՀՀ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի պարբերական ժողովածու, Եր., Գիտություն հրատ., 2014, հատոր 16, 208 էջ:
2. Գիտական աշխատություններ, ՀՀ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի պարբերական ժողովածու, Գյումրի, 2014, հատոր 17, 228 էջ:
3. Հայրապետյան Ս.Ա., ԳՊՄի պատմություն, Գյումրի, Էլդորադո հրատ., 2014, 106 էջ:
4. Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն, Երիտասարդ գիտնականի հանրապետական դպրոցի նյութերի ժողովածու, Գյումրի, 2014, 102 էջ:

Հոդվածներ

5. Աթանեսյան Լ., Ճանապարհ ջրաներկի միջով, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 16, Եր., 2014, «Գիտություն», էջ 177-181:
6. Ալեքսանյան Կ. Վ., Ալեքսանդրապոլի գավառի տեղական իշխանության մարմինների գործունեությունը թուրքական ռազմակալման շրջանում/ 1918 մայիս-դեկտեմբերին/, Հայկազեան հայազիտական հանդես, Պեյրութ, 2014, էջ 283-300:
7. Ալեքսանյան Կ. Վ., Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցումները արտաքին գործերի նախարարին՝ Ալեքսանդրապոլի իրավիճակի մասին (1918թ. սեպտեմբեր-դեկտեմբեր), Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 1, 2014, էջ 125-165:
8. Ալեքսանյան Կ. Վ., Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման շրջանում 1918-1921թթ., «Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» երիտասարդ գիտնականի հանրապետական դպրոցի նյութերի ժողովածու, Գյումրի, 2014, էջ 25-30:
9. Ալեքսանյան Կ. Վ., Ալեքսանդրապոլի գավառի վարչաքաղաքական պատկերը 1918-1921թթ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 16, Եր., «Գիտություն», էջ 49-55:
10. Այվազյան Գ. Ս., Ալեքսանդրապոլի թղթակցություններ «Մշակ»-ին 1872-1892 թթ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 17, Եր., 2014, էջ 100-117:
11. Այվազյան Գ. Ս., Հասարակական-մշակութային կացությունը Ալեքսանդրապոլում XIX դարի երկրորդ կեսին, «Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» երիտասարդ գիտնականի հանրապետական դպրոցի նյութերի ժողովածու, Գյումրի, 2014, էջ 95-100:
12. Акопов А. А., Матевосян В. Некоторые проблемы региональной политики Грузии, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 16, Եր., «Գիտություն», 2014, էջ 119-126:

13. Ակոպով Ա.Ա., Տայքյան հուշարձանների «պատկանելության» հարցի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 17, Եր., «Գիտություն», 2014, էջ 65-71:
14. Ակոպով Ա.Ա., Հյուսիսային Հայաստանի պատմական հուշարձանների «պատկանելության» վիճահարույց հիմնահարցեր, «Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» երիտասարդ գիտնականի հանրապետական դպրոցի նյութերի ժողովածու, Գյումրի, 2014, էջ 61-70:
15. Ավագյան Ի.Է., Էրիախի երկրի կրոնը., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XVI, Գյումրի, «Գիտություն», 2014, էջ 63-71:
16. Բազեյան Կ. Ռ., Հայկական ավանդական արհեստների ուսումնասիրության շուրջ, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, XVI, ՀՀ ԳԱԱ հրատ., Եր. 2014, էջ 188-194:
17. **Բազեյան Կ. Ռ.**, Աղանյան Գ. Թ., Ալեքսանդրապոլը 1877-1878թթ ռուս-թուրքական պատերազմի տարիներին (ըստ «Մշակի» տեղեկությունների), ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.16, Գյումրի 2014, էջ 34-48:
18. Bazeyan K. R. The Russo-Ottoman War of 1877-1878 in Armenian Literature, Balkanistic Forum, 14, Heroes and memory the Russo-Ottoman War 1877-1878, Blagoevgrad, 2014, p. 189-195.
19. Բոյաջյան Ա. Գ., Բուսաբուծության զարգացման վրա ազդող գործոնները Ալեքսանդրապոլի գավառում XIXդ. վերջին XXդ. սկզբին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.14, Գյումրի, 2014, էջ 80-88:
20. Բոյաջյան Ա., Հարությունյան Ղ., Պետրոսյան Կ., «Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հնարավոր ազդեցությունները», ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր», 2014, պ. 1, Գյումրի, էջ 267-277:
21. Եզանյան Լ.Գ., Մեծ Սեպասարի օջախ գոհարանները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ, XVI, 2014, էջ 56-62:
22. Եզանյան Լ.Գ., Վաղբրոնզիդարյան մի ձեսի շուրջ /ըստ Մեծ Սեպասարի նյութերի/ ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատություններ, հ. XVII, 2014, էջ 134-141 :
23. Худавердян А.Ю., Деведжян С.Г., **Еганян Л.Г.** Способы обращения с телами умерших в памятниках Ширакаван и Лори-берд, по данным палеоантропологии // Հայ ժողովրդական մշակույթ XVI, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդուկյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, «Գիտություն» 2014, էջ 273-280:
24. Худавердян А. Ю., Деведжян С. Г., **Еганян Л. Г.**, Реконструкция особенностей жизнедеятельности населения эпохи железа Армянского нагорья по данным антропологии, Этнос и среда обитания, Сборник статей по этнической экологии, Выпуск 4, Москва 2014, с. 215-232.
25. Հայրապետյան Ա.Ա.,1853-1856թթ. Ղրիմի պատերազմը և Ալեքսանդրապոլի գավառը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 16, Գյումրի, 2014, էջ 23-33:

26. Հայրապետյան Ա. Ս., 1853-1856թթ. Ղրիմի (Արևվելյան) պատերազմը և Ալեքսանդրապոլի գավառը ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 17, Գյումրի, 2014, էջ 89-99:
27. Հայրապետյան Ա. Ս., Արևմտահայության տեղաբաշխումն Ալեքսանդրապոլի գավառում (XIXդ.-XXդ. սկիզբ), «Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» երիտասարդ գիտնականի հանրապետական դպրոցի նյութերի ժողովածու, Գյումրի, 2014, էջ 13-25:
28. Հայրապետյան Ա.Ս., Հայերենի կրավորական կառույցը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 17, Գյումրի, 2014, էջ :
29. Հարությունյան Հ. Հ., Կարսի և Ալեքսանդրապոլի աշուղական ավանդույթների փոխառնչությունները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.16, Գյումրի, 2014, էջ 72-79:
30. Հարությունյան Հ. Հ., Շիրակի ավանդական երաժշտության արդի վիճակը, «Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» երիտասարդ գիտնականի հանրապետական դպրոցի նյութերի ժողովածու, Գյումրի, 2014, էջ 66-61:
31. Հովհաննիսյան Ռ.Պ., Սահակյան Կ.Ա., Ապագա զինվորի հոգեկերտվածքի առանձնահատկությունները ազգային գաղափարախոսության համատեքստում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 16, 2014, «Գիտություն» հրատ., էջ 137-144:
32. Մատիկյան Հ. Հ., «Երեխա» հասկացությունն անգլալեզու և հայկական ցանկության բանաձևերում (օրինանքներ և անեծքներ), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», թիվ 16, էջ 189-194:
33. Պետրոսյան Լ. Ս., Օրոնտես-Երվանդը՝ Հայաստանի անկախության վերականգնող, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», թիվ 17, 2014, էջ 77-83:
34. Պետրոսյան Ս. Գ., Մասիսը եւ Արտավազդի առասպելը (հայ-շումերական պատմամշակութային փոխառնչությունների պատմությունից, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», թիվ 16, 2014, էջ 5-14:
35. Պետրոսյան Ս. Գ., Զարմայր նահապետի և «Քաղդէացւոց» արքայացանկի շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», թիվ 17, 2014, էջ 58-69:
36. Պետրոսյան Ս. Գ., Հայկական լեռնաշխարհի հնագույն կառքերի և կառամարտիկների մասին, «Վեմ» հանդես, N4, 2014, 12 էջ:
37. Սահակյան Կ. Ա., Հովհաննիսյան Ռ. Պ., Ապագա զինվորի հոգեկերտվածքի առանձնահատկությունները ազգային գաղափարախոսության համատեքստում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», թիվ 16, 2014, «Գիտություն» հրատ., էջ 137-144:

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

տնօրեն՝ Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Հայրապետյան,
գիտքարտուղար՝ արվ. թեկն. Հասմիկ Հարությունյան,
էլեկտրոնային փոստ՝ hkentron@mail.ru
կայքէջ՝ www.shirakcenter.sci.am

7. Տվյալներ կադրերի վերաբերյալ

ա/ -

բ/ -

գ/ 4, 13, 5

8. Հաշվետու տարում պաշտպանված ատենախոսությունների քանակը –

9. Ս.Հայրապետյանը ՀՀ Նախագահի կողմից արժանացել է Գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման, Կ.Սահակյանը պարգևատրվել է ՀՀ վարչապետի դիպլոմով, Ս.Պետրոսյանը՝ ՀՀ վարչապետի Ոսկե հուշամեդալով, Լ.Եգանյանը՝ ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով, Լ. Աթանեսյանը՝ ՀՀ ԿԳՆ շնորհակալագրով:

10. ՇՀՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԳԱԱ հայագիտական ինստիտուտների, ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ԳՊՄԻ-ի մի շարք հայագիտական ամբիոնների, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Հայաստանի պատմության ազգային, Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի, Գյումրու երկրագիտական եւ ժողովրդական ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարանների, Հայաստանի ազգային արխիվի, Չարենցի անվան ԳԱԹ-ի եւ այլ պետական ու հասարակական կազմակերպությունների հետ: Համատեղողների թիվը՝ 8:

2014թ. համատեղ 8 հրապարակումներ են եղել Հ. Շարամբեյանի անվ. թանգարանի/1/, ԳԱԱ պատմության/1/, հնագիտության եւ ազգագրության ինստիտուտների/1/, Հալեի համալսարանի գերմանական հնագիտական արշավախմբի/1/, ԵՊՀ/1/, ՀՊՄՀ/1/, ԳՊՄԻ/2/ հետ:

11. -

**ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝
գիտքարտուղար՝**

**Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Աղյուսակ 1

Աղյուսակ 2

2014թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)			
		Նպատակային ֆինանսավորում	Բազային	Թեմատիկ	Տնտ. Պայմանագրեր
1	2		3	4	5
1	Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ		25.341.900դր.		

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում արտ. Երկրից
1	2	3	4	5
1	«Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» երիտասարդ գիտնականի դպրոց	Գյումրի, 18-23 օգոստոսի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն	30	
2	«Հացի տոն» ավանդական ազգագրական փառատոն	Գյումրի, 06 հոկտեմբերի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, ՀՀ մշակույթի նախարարություն	50	12
3.	«Առաջին աշխարհամարտը և Շիրակը» պատմագիտական ընթերցումներ	Գյումրի, 3 նոյեմբերի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն,	12	2

Աղյուսակ 4

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ կազմակերպություններում

N	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և խորհրդածությունների համար
1	2	3	4	5	6
1	ՇՀՀ կենտրոն	Ուկրաինա, ՌԴ, Վրաստան, Բելառուս, Ֆրանսիա, Գերմանիա, Լիբանան	2 3 1 1 1 2 1	1 1 1 1	

Աղյուսակ 6

Աղյուսակ 7

Կազմակերպության 2014թ. Ֆինասավորման ծավալները

N	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտաժողով (\$,€, руб.)	Արժույթի կուրսը	Դրամ
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	27.502.400				

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2014թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	ՇՀՀ կենտրոն	4				30	3		

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 01.01.2014թ.		Հաշվտու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1				
ՇՀՀ կենտրոն				

Աղյուսակ 10

Աղյուսակ 11

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2014թ.

N	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ԳԱԱ ակադեմիկոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	8
	ՇՀՀ կենտրոն					2	11

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ГОДОВОЙ ОТЧЕТ

Об основных результатах научной и научно-организационной деятельности 2014 г.

Ширакского центра арменоведческих исследований НАН РА

1. Из важных результатов деятельности ШЦАИ НАН РА можно выделить следующие:
 - а) Вышли в свет 16 и 17 тома периодических сборников статей “Научные труды” /соответственно 208 и 228 стр./ и подготовлен к печати II выпуск серии книг “Археологические и историко-этнографические исследования Ширака” в объеме 13 печатных листов.
 - б) В августе Центр организовал недельную летнюю республиканскую школу молодого ученого с тридцатью слушателями, по теме “Изучение историко- культурного наследия Ширака”.
 - в) Центр в городе Гюмри организовал второй этнографический фестиваль “Праздник хлеба”, с участием представителей всех регионов республики и всех национальных меньшинств.
 - г) Научно обоснована теория, что Армянское нагорье сыграло значимую роль в создании и распространении колесных средств передвижения, особенно боевых колестниц, выявлено армяно-индоевропейское происхождение некоторых хетских имен средств передвижения.
 - д) Археологами Центра в Ширакском марзе были обнаружены новые древнейшие поселения: некрополь эпохи перехода от поздней бронзы к раннему железу на административной территории села Маисян, античный некрополь на территории крепости-поселения IX-VI вв. до н. э. Айкадзора, выдолбленные в скале склепы и катакомбы в крепости XIII- VI вв. до н. э. на административной территории села Азатан.

2. Основные результаты полученные базовым финансированием в 2014 г.

ИИИ НАН РА в 2014 г. продолжал реализовывать программу “Археологические и историко-этнографические исследования Ширака-2” (рук. д.ф.н. С.Айрапетян).

Плановыми раскопками, проводимыми в июне 2014 г. было подытожено десятилетнее археологическое исследование храмового комплекса – памятника эпохи ранней бронзы Мец Сепасара, обнаруженный археологами центра. Представилась реальная возможность обобщить проектную картину храмового комплекса, различия построек по характеру, принципы планирования и застройки местности, окончательное уточнение датировки найденных материалов, а также типологические параллели с другими местностями.

Были продолжены плановые раскопки также в крепости-поселении и некрополи IX-VIII вв. до н. э. Азатана (август) и в крепости-поселении эпохи раннего железа Айкадзора (октябрь). В первом полугодии проводился камеральное исследование и реставрационная работа археологических материалов, найденных во время прошлогодних археологических раскопок. Результаты работ: 3 опубликованные научные статьи (один в РФ), участие на трех международных и 1 республиканской конференциях (Ереван, Казань, Санкт Петербург, Москва). В отчетном году группой были обнаружены 2 новые археологические памятники на территориях сел Маисян и Азатан Ширакского марза.

- В рамках программы “Археологические и историко-этнографические исследования Ширака-2” в 2014г. было продолжено исследование некоторых основополагающих вопросов древнейшей, древней и новой периодов истории исторического гавара в контексте истории Армении. В частности уточнены индоевропейские-армянские древнейшие названия колесных средств передвижений, вопросы роли Оронтес/Ерванда в деле восстановления независимости Армении после распада Ахеменидского царства, завершено исследование страны Эриахи – древнего Ширака. Прокомментированы некоторые современные вопросы национальной принадлежности памятников исторического Тайка, двумя посещениями были проведены обмеры некоторых исторических памятников Тайка, завершилась разработка материалов, относящихся демографического состояния Алексадропольского гавара в период 1917-1918 гг., исследование состояния западноармянских переселенцев, обоснованных на территории гавара с 1914 г., деятельности местных органов власти Алексадрополя во время турецкой оккупации 1918-1921 гг., а также учебных и культурных заведений города. Группа историков центра в отчетном году опубликовала 18 научных статьи, участвовала в 4 международных конференциях, организовала научные чтения по теме “Первая Мировая Война и Ширак”.
- Продолжена вторая часть историко-этнографического объемного исследования Алексадрополь-Ленинкан-Гюмри, которая посвящена обобщению этнографического образа Ленинканской эпохи города. Изучены современные проявления традиционных торжеств, в Гюмри организован и проведен второй этнографический фестиваль “Праздник хлеба”, завершено составление сборника песен “Народное музыкальное творчество Ширака во второй половине XX века”. Продолжаются работы по сбору и систематизации городских

танцев Александрополь-Ленинакана, исследование истории живописи Ширака, на основе анализа богатого фактического материала изучены вопросы касающиеся индустриализации города Ленинакан в советский период, а также городских ремесел и экономической занятости и т. д.

Группа этнографов центра организовала четыре научные экспедиции на территории марза, расшифровала и систематизировала около 20-ти образцов музыкального фольклора Ширака, опубликовала 12 научных статей /один в Болгарии/, с тремя докладами выступила в международных конференциях, с четырьмя докладами – в республиканских конференциях. В августе 2014 года Центр организовал недельную летнюю республиканскую школу молодого ученого “Изучение историко-культурного наследия Ширака”, с тридцатью слушателями (аспиранты, магистры, учителя, кандидаты наук, соискатели), опубликован сборник материалов школы в объеме 7 печатных листов.

Директор Центра

С. Айрапетян

ученый секретарь

А. Арутюнян

ANNUAL REPORT

On the main results of both scientific and organizational activity of Shirak's Center for Armenological Studies in 2014

1. Center of Armenian Studies, NAS carried out the following activity in 2014:

- a/ The Center's 16th and 17th volumes of "Scientific Works" of collected articles have been published/"with 208 and 228 pages accordingly/ and the second issue of the series of books /with 13 signature/ devoted to the study of "Shirak's archaeological and historio-ethnographic exploration" signature has been prepared for publication.
- b) In August the Center organized a week summer republican school entitled "Shirak's historical and cultural study" /with 30 listeners/.
- c) In Gyumri the Center organized number two ethnographic festival entitled "Bread festival" with the participation of all regions and ethnic minorities from the republic.
- d) The hypothesis has been scientifically grounded that the Armenian country has had a great role in the inventing and spreading wheeled means of conveyance especially war-chariots, there has been revealed the Indo-European origin of the Hittite carriages.
- e) The archaeologists of the Center have discovered new places in Shirak region: a necropolis of the late bronze Age to early Iron age in the administrative territory of Mayisyan country, antique necropolis of 9-6BC in Gaykadzor, in the territory of castle-settlement, rocky necropolises and catacombs in the administrative territory of Azatan 13-8BC.

Director of the Center

S. Hayrapetyan

Scientific Secretary

H. Harutyunyan

Ա Կ Տ

Գիտական աշխատանքների հանձման-ընդունման

Կազմված է «_____» _____ 2014թ.

Մենք, ներքոստորագրյալներս, մի կողմից «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» թեմայի ղեկավարը՝ ի դեմս ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի, մյուս կողմից՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա ՊՈԱԿ-ի նախագահ՝ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, համաձայն գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «ՀՀ ԳԱԱ-ԾՁԲ – 37» պայմանագրի 5 կետի՝ կազմել ենք սույն ակտը այն մասին, որ թեմայի շրջանակներում կատարված աշխատանքը բավարար է և համապատասխանում է 2014թ. օրացուցային պլանի բոլոր պարտավորություններին:

Պատվիրատու _____
ստորագրություն

Կատարող _____
ստորագրություն